



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Կոչերպա

4829

Կալա

39

891.85
4-76

Թիֆլիս
1893

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ՄԻՐԶՈՅԵԱՆԻ ԵՒ Ս. ԼԻՍԻՑԵԱՆՑԻ № 87

891.85

4-76

ԿՈՎԵՐՍԿԱ

124

№ 6509

պր.

Կ Ա Զ Ե Ա

895.85

4-81.

Լ Ի Հ ա Կ ա ն Վ Ե պ Ի Կ

ԹԱՐԳ. ՕՐԻՈՐԳ ՄԻՀՐՈՒՀԻ

12003

ԱՐՏԱՏՊԻՍՏՐ „ՏԱՐԱԶԻՑ“

Центральная биб-ка им. Ленина

1930 г.

№

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Типография Груз. Издат. Т—ва. | Տպարան Վրաց Հրատ. Ընկ.
1893

2011

1-10K.

[illegible]

869

41

१

Դռանս զանգը քաշեցին: Ես դուրս վազեցի բացանելու, ենթադրելով թէ այդ մի որևէ հիւանդ կը լինի, իսկ հիւանդները առհասարակ սակաւ են երևում վճարող ժամերին: Երևակայեցէք ձեզ իմ զարմանքը, երբ հասակաւոր մարդու փոխարէն ես գտայ դռանս մօտ մի երեխայ, որի ձեռքը հագիւ կարող էր հասնել զանգիս կոթին: Առաջին հայեացքից իսկ կարելի էր որոշել որ երեխան պատկանում էր ազգաբնակութեան ամենաաղքատ դասին. կարճ շորն իջնում էր հագիւ ծնկներից ցած և առջևից ծածկած էր մուգ-կապտագոյն գոգնոցով. ոտներին կոշտ ոտնամաններ, մազերը սանրած էին երկու հիւսերով, որոնք ետևից կապւած էին սպիտակ կտաւի կտորով: Նախասենեակը մուլթն էր և ակներև էր որ աղջիկը մի փոքր շփոթւած էր այդ մթուլթիւնից:

*) Պրուսական օրէնքով ռուսապատակ լինացող արգելեց մնալ Պրուսիայի սահմաններում:

—Այստեղ այնպէս մութ է... սկսեց նա շփոթ-
ւած: Այդ դժուար էք, պ. բժիշկ:

— Այո՛, զաւակս, ես եմ, քնչ է քեզ հարկա-
ւոր, մօտիւր այստեղ, այստեղ աւելի լոյս է:

Ես ներս տարայ աղջկան առանձնասենեակս
և տեսայ կլոր, վարդագոյն մի դէմք՝ վեր ցցաձ-
քթով, փայլող աչիկներով և երկու փոսիկներով
թշերին: Նստելով բազկաթոռի մէջ, աղջկան կանգ-
նեցրի առաջս:

— Ի՞նչ է քեզ հարկաւոր, դու խօսիւմ ես:

Այս հարցը աղջկան երեաց այնպէս ծիծաղա-
շարժ, որ նա ոչ մի կերպով չը կարողացաւ զսպել
իր ծիծաղը և ծիծաղեց, այն էլ այնպէս սրտանց,
վարակիչ, որ ինքս սկսեցի ծիծաղել՝ նայելով նրան:

— Դէհ, տեսնում եմ՝ դու առողջ ես, ասացի
ես, հիւանդները այդպէս չեն ծիծաղում:

— Ես եկայ ձեզ մօտ, պ. բժիշկ, սկսեց նա
շտապ և համարձակ, — որովհետեւ... գիտէք...
հայրիկս միշտ այնպէս բարկացոտ է լինում, երբ
կարգալու բան չէ ունենում: Այժմ նա արդէն չէ
ստանում լրագիր, իսկ մայրիկը երէկ ասում էր
պառաւ Մարիամին, որ հայրիկը այժմ հէնց այն
պատճառով է գնում գինետուն, որ տանը կարգա-
լու բան չունի: Երբ վերդառնում է գործարանից
և լրագիրը սեղանի վրայ չի լինում, նրան այլևս
ոչնչով չես շահիլ:

— Իսկ հայրդ ո՞վ է:

— Բանւոր է գործարանում: Առաջ մենք լրա-
գիր էինք ստանում Պողոսանից, իսկ այժմ՝ խօսքի-
տէք, վռնդում են այնպիսի բանւորներին, որոնք
լեհերէն լրագիր են ստանում... ահա ես ձեզ մօտ
եկայ...

— Իսկ որտեղ էք դուք ապրում:

— Հէնց այս միւսնոյն տանը, ուր և դուք, վե-
րում:

— Քեզ հայրիկն է ուղարկել:

— Ախ ո՛չ: Ես և մայրիկը այնպէս կարծեցինք
թէ դուք երեւի ստանում էք լրագիր, որովհետեւ
ձեզ մօտ ամեն օր գալիս է նամակաբերը: Պառաւ
Մարիամը, հէնց որ դուք այս բնակարանը տեղա-
փոխեցիք, իսկոյնէսթ մեզ ասաց, որ այս նոր
կենացող բժիշկը լեհացի է:

— Ուրեմն դու ուզում ես որ ես լրագիր տամ
հօրդ:

— Այո՛:

— Շատ բարի: Իսկ դու քնչ կը տաս ինձ գրա-
փոխարէն:

Աղջիկը արագ նայեց երեսիս իր փայլուն աչիկ-
ներով և մի րոպէ մտասուզւեց:

— Ախ, գիտէք. ես ունիմ մի մոխրագոյն կա-
տու—կամենում էք՝ ես ձեզ կը տամ իմ մոխրա-
գոյն կատուն, բացազանչեց նա ուրախանալով:

—Ոչ, ես չեմ կամենում քո մոխրագոյն կա-
տուն, աւելի լաւ է համբուրիւր ինձ: Անունդ
քնչ է:

—Կազեա:

Այդ օրից իմ և Կազեայի մէջ սերտ բարեկա-
մութիւն հաստատուեց: Նա ամեն օր գալիս էր
լրագրի համար և եթէ ոչոքի չէր հանդիպում ինձ
մօտ—իսկ այդ ամենից յաճախ էր պատահում—քա-
շում էր ինձ իմ առանձնասենեակը և այնտեղ վազ-
վզում էր, ցատկում էր, առհասարակ իրեն զգում
էր ինչպէս իր տանը: Շնորհիւ յաճախակի այցե-
լութիւնների, ամեն բան նրան յայտնի էր իմ բնա-
կարանում, սակայն այդ այնուամենայնիւ չէր խան-
գարում նրան միշտ մի որևէ նոր և հատաբարբա-
կան բան գտնելու: Եւ ամեն մի այդպիսի գիւտին
յաջորդում էր յռողջ, ուրախ մանկական ծիծաղի
այնպիսի հեղեղ, որ սրտիս մէջ ես մէկ ինչոր թե-
թեւութիւն էի սկսում զգալ: Զարմանալի զգա-
յուն էր այդ մանուկը. նա միշտ նախագուշակում
էր իմ հոգեկան տրամադրութիւնը և մկան պէս
անհետանում էր, հէնց որ գտնում էր ինձ զբաղ-
ւած կամ մտասուզւած: Իսկ եթէ պատահում էր
որ նստացնէի նրան ծնկանս վրայ, նա մի վայր-
կեանում լլըմիտ էր դառնում՝ թէկուզ անզուսպ
ծիծաղելիս լինէր դրանից առաջ, և մնում էր
ծնկանս վրայ, մինչև որ ինքս իջեցնում էի նրան

գետին, ժպտում էր, բայց նայում էր արդէն հան-
դարտւած: Կեանքը եռում էր նրա ամբողջ փոք-
րիկ էութեան մէջ, նա կարծես չէր կարող ապրել
առանց շարունակ շարժելու, ծիծաղելու և վազ-
վզելու: Կազեայի յանկարծակի երևալն ու անհետա-
նալը, երբ ինձ մօտ հիւանդներ էին լինում, կա-
րող եմ համեմատել պատուհանիս մէջ ծիծեռնակի
երևալու հետ: Աղջկայ երևակայութիւնը նոյնպէս
չափազանց վառ էր: Մի օր թերթելով մէկ ինչ որ
գիրք իմ գրասեղանի վրայ, նա պատահամբ տե-
սաւ մարդու կմախքի պատկեր:

—Ս, ի, մահն է, բացագանչեց Կազեան, գու-
նատելով և սկսեց սաստիկ դողալ, իսկ զէմքը
այդ ըոպէին մի այնպիսի զարհուրանք էր արտա-
յայտում, որ հազիւ կարողացայ հանգստացնել նը-
րան: Նրա խօսքերից ծանօթացայ նրա ազգական-
ների հետ:

Նա բոլորովին որբ էր, մայրը վախճանւել էր
դեռ այն ժամանակ, երբ ինքը երկու ամսական էլ
չը կար: Յետոյ նրա «հարազատ հայրը» պսակւեց
նրա «ներկայ մայրիկի» հետ, բայց կաթսան գոր-
ծարանում պայթեց, հայրիկը տաք ջրից խաշւեց
ու մեռաւ: Այնուհետև նա և մայրիկը «այնպէս»
ապրում էին, իսկ ահա հինգ տարի է, ինչ մայրի-
կը մարդու է գնացել մէկ ուրիշ բանուորի:

—Ես ունիմ այժմ,—վերջացրեց Կազեան իր

պատմութիւնը, երկու եղբայր և քույր, ես նրանց նայում և օրօրում եմ:

Աղջիկը չը նայելով որ ութը տարեկան էր, շատ աշխատասէր էր: Նա ջուր էր կրում փոքրիկ տակառի մէջ առաւօտները, աւելում էր բնակարանը և գործում էր բրդէ ձմեռայ գուլպաներ մայրիկի համար:

Ննջարանիս պատուհանները նայում էին բազը և ես ինքս շատ անգամ տեսնում էի, ինչպէս Կազեան ջուր էր հանում:

Աղջիկը ձեռնիկներով կախ էր ընկնում ջրհանի երկաթէ կոթից և այդպիսով ստիպում էր նրան վայր իջնել, իսկ յետոյ վեր էր ցատկում, երբ հարկաւոր էր լինում նորից հասնել բարձրացած կոթին: Երբ վերջապէս կուժը լցւում էր ջրով, աղջիկը առնում էր նրան ձեռքով և սաստիկ թեքւում էր հակառակ կողմը՝ ցանկանալով հաւասարակշռութիւն պահպանել: Երբեմն ես բաց էի տնում օդանցքս, որպէս զի բարեւեմ Կազեային — ամեն անգամ նա ուրախ ուրախ ծիծաղում էր, երբ նկատում էր որ ես նայում եմ ջրհանի կոթի հետ նրա արած մարմնամարզական վարժութիւններին և քաղցրահամբոյր գլուխ էր տալիս ինձ:

— Բայց չէ՞ որ այն կուժը սաստիկ ծանր է քեզ համար, — ասացի նրան մի անգամ:

— Ո՛, ոչ, ծանր չէ, ձեռքս նրանից մի

փոքր լոգնում է, բայց իսկոյնեւեթ հանգստանում եմ և ոչինչ...

Մի օր աղջիկը ներս վազեց ինձ մօտ լրագիրների համար և իսկոյնեւեթ ծլկեց տուն: Մայրիկը հիւանդ է, բացատրեց նա, և մարդ չկայ որ երեխաներին նայէ:

Իմանալով Կազեայի խորթ մօր հիւանդութեան մասին, իսկոյն շտապեցի նրանց մօտ: Հէնց շէմքից աչքիս ընկաւ այն մաքրութիւնը և կարգ ու կանոնը, որով տարբերւում էր այդ չունեւոր մարդկանց բնակարանը: Մաքուր լացւած փաւերը շարքով տեղաւորւած էին դարակի վրայ, երեխաները աղքատիկ, բայց մաքուր հագնւած էին, իսկ հիւանդի անկողինը թէև շատ կոշտ նիւթից էր, բայց նոյնպէս աչքի էր ընկնում զարմանալի մաքրութեամբ:

Կազեան նստած էր օրօրոցի մօտ և՛ օրօրելով ոտով՝ գուլպայ էր գործում: Նա այնպէս խորասուզւած էր իր աշխատանքի մէջ, որ մինչև անգամ չը լսեց իմ քայլերի ձայնը:

— Ախ, այդ դուք էք, պ. բժիշկ, բացազանչեց նա նկատելով ինձ:

Մօտենալով հիւանդի անկողին՝ նստեցի մահճակալի վրայ և սկսեցի խօսել իմ բարեկամութեանը մասին Կազեայի հետ: Հիւանդը նայում էր ինձ մեծ փալլուն աչքերով, որոնց մէջ ցոլում էր

երախտագիտութիւն, իսկ Կազեան այդ ժամանակ օրօրում էր օրօրոցը. կամենալով հանգստացնել լաց լինող մանուկին: Հին ժամացույցի միջից յանկարծ դուրս թռաւ հոպոպը և կանչեց եօթնանգամ: Հիւանդի դէմքը մի րոպէում փոփոխեց: Անհանգըստութեամբ լի աչքերը նա ման ածեց սենեակի մէջ և հայեացքը յառեց երեխաների վրայ: Կազեան արագութեամբ վեր թռաւ տեղից, վառեց լապտերը, դրեց սեղանի վրայ, կողքին բաց արեց լրագիրը, մօտեցրեց սեղանին բազկաթուռը, իսկ յետոյ ետ քաշեց օրօրոցը սենեակի ամենամութ անկիւնը: Երկու փոքրիկ երեխաներ, որոնք տաշեղներով խաղում էին սենեակի մէջտեղում, նոյնպէս սկսեցին շտապով հաւաքել իրանց խաղալիկները և հեռացան պատրհանը, որ գտնւում էր մեծ փռուարանի ձախ կողմում: Նստարանի վրայ իր համար հանգիստ մրափող մեծ կատուն էլ շտապով մի կողմ ցատկեց և թագկացաւ սլահարանի տակ:

Մի րոպէից յետոյ սանդուղքի վրայ լսեցին ծանր քայլեր. սենեակը մտաւ կապտագոյն բանւորական շապիկը հագին մի բարձրահասակ տղամարդ: Չը նկատելով ինձ, նա զննեց սենեակը մօռայ հայեացքով և գոռաց մոռացած՝ վերջին տաշեղները հաւաքող երեխաների վրայ.

— Լակոտներ, սո՛ւս, տեղերդ:

Սենեակի մէջ մի ակնթարթում ամեն ինչ լը-

ռեց, մինչև անգամ փոքրիկ, մէկուկէս տարեկան մանուկը, որը կամաց լաց էր լինում օրօրոցի մէջ— նա էլ լռեց:

— Լսիր, ասաց երկչոտութեամբ հիւանդը—
պ. բժիշկ...

— Այո էլ քնչ է... ճշաց բանւորը.— ես աւելորդ փող չունեմ բժիշկների համար:

Լսելով այդ՝ ես թողեցի հիւանդի ձեռքը, որի զարկերակը շոշափում էի և բարձրացայ աթոռից: Այն ժամանակ միայն բանւորը նկատեց ինձ և մի փոքր շփոթւեց: Իսկ կինը շտապով արտասանեց.

— Պ. բժիշկը այստեղ ինքն իրան է եկել: Կազեան գնացել է լրագրի համար...

Մինչ այդ՝ ես մեկնեցի ձեռքս տանտիրոջ:

— Յուսով եմ, — սոսցի ես, — ամեն բան աջող կը լինի. իսկապէս ասած՝ ձեր կինը կարիք էլ չունի բժշկի: Ես եկայ ձեզ մօտ պարզապէս իբրև հարևան և փոքրիկ Կազեայի բարեկամ:

Բանւորը սեղմեց ուսերը:

— Այդ ձեզանքց են լրագիր բերում... խաբեցին ինձ իբր թէ ձեզ լրագիր հարկաւոր չէ...

— Ուղիղ էլ ասել են— ես տալիս եմ կարգալուցս յետոյ:

— Եւ քնչիս է պէտք ինձ այդ լրագիրը: Երբ բանւորը վաստակից յետոյ վերադառնում է տուն, նա պէտք է ընթրէ և գնայ քնելու. այդ նրա՝

շան իրաւունքն է: Բան չունէք, գիշերներով կարգալ, աւելորդ էլ ծախս անել ճրագի համար:

Այս ասելով նա ամուր խփեց բռունցքը սեղանին:

— Էհ, գիտէք, բանւորը նոյնպէս քաղաքացի է, ինչպէս և մէկ ուրիշը... ասացի ես, կամենալով հանգստացնել նրան:

Նա դառնութեամբ ծիծաղեց:

— Քաղաքացի կարող է անւանւել միայն նա, ով ունի ոյժ, փող: Քաղաքացի է այստեղ գերմանացին, — նրան ամեն բան թույլատրելի է: Շատ լաւ քաղաքացի ենք ես և դուք, եթէ մեզ կարող են քշել աշխարհի չորս կողմը և ոչ մէկը մեզ անգամ չի պաշտպանիլ: Չէ որ այժմ հրամայւած է ստանալ գերմանական լրագիր նրա համար, որպէս զի մենք շուտով մոռանանք մեր լեզուն և կրօնը: Դէհ, ներեցէք — ընդհատեց ինքն իրան բանւորը, — բայց ես ուտել եմ ուզում:

Կազեան այդ միջոցին արդէն դրել էր սեղանի վրայ մի քրեղան գետնախնձորով, մի շիշ գարեջուր և բաժակ:

Նա նստեց և սկսեց ուտել կիտւած յօնքերով:

— Լսեցէք, — ասացի ես բանւորին, — ձեր կնոջ հիւանդութիւնը պահանջում է անյապաղ կանացի օգնութիւն. անհրաժեշտ է գնալ...

— Այ չար սատանան դրդեց ինձ պստկւել:

Միշտ այս կինարմատները դաւիդառաքա են, մինչև անգամ հանգիստ ընթրել չեն թողնում...

— Կերէք հանգիստ. — ընդհատեցի ես, — ես գնում եմ այժմ զբօսներու և կարող եմ ուղարկել ձեզ մօտ մի կին:

Բանւորը տեղից վերկացաւ ինձ մինչև դուռը ճանապարհ ձգելու համար: Նա աշխատում էր իրեն զսպել, բայց նկատելի էր որ նա բարկացած է և յուզւած:

Գիշերը զարթեցրեց ինձ զանգիս ուժգին ձայնը: Շտապեցի հագնւել և բաց արի դուռը: Իմ առաջը Կազեան էր գունատւած, վախեցած դէմքով. նա դողում էր և կիսով չափ հանւած էր:

— Մայրիկը սաստիկ հիւանդ է, արտասանեց նա: Այն կինը, որը մեզ մօտ է, հրամայեց ինձ գալ ձեր ետեւից:

Ես շտապեցի վերև: Ուղիղ որ բժշկի օգնութիւնն անհրաժեշտ էր: Մարդը հիւանդի անկողնու մօտ չէր, միայն ամենամեծ վտանգի ըրպէին նա ներս մտաւ սենեակը:

— Տէր Աստուած, դեռ ևս լոյս է սենեակում, չէս կարող տկարութիւն քաշել մութ սենեակում, լսեց նրա բարկացած ձայնը:

Այդ ըրպէին ամբողջ ուշադրութիւնս գրաւած էր հիւանդի վտանգաւոր դրութիւնը, և երբ վտանգը անցաւ, ես նկատեցի որ բանւորը կանգ-

նած է կնոջ անկողնու մօտ և լաց է լինում: Նրա անախորժ էր որ ես նկատեցի նրա յուզմունքը և նա փախաւ սանդուղքը: Կազեան տանը չէր, նրան ուղարկել էինք հարեանուհու տուն փոքրիկ մանկան հետ միասին:

Մի քանի օրւայ ընթացքում այցելում էի հիւանդին: Ես մեղքանում էի խեղճ կնոջը և աշխատում էի որչափ կարելի էր՝ պաշտպանել նրան ամուսնու կոպտութիւնից և դիւրագրգռութիւնից, ամուսնու, որին զգեցնում էր ըստ երևոյթին նրա թուլութիւնը և գործունէութեան պակասութիւնը: Բանուորի կոպիտ, բռնակալ բնավորութիւնն երբեմն ամբողջապէս մերկանում էր իմ ներկայութեամբ: Պատահում էր որ նախատինքի բառեր պատրաստ էին լինում դուրս թուչել իմ շրթներից, սակայն հիւանդ կնոջ աղերսական հայեացքն ակամայ կանգնեցնում էր ինձ: Մի օր, երբ ամուսինը բացակայ էր, նա ասաց ինձ.

—Նա չարասիրտ չէ, միայն այդպիսի անիծւած բնավորութիւն ունի—որին որ ամենից շատ սիրում է՝ նրան էլ ամենից շատ հայհոյում է:

Մօր ամբողջ հիւանդութեան միջոցին փոքրիկ Կազեան անգաղաք դիտողութեանս առարկայ էր: Նրա փոքրիկ մարմինը միշտ շարժւում էր սենեակի մէջ: Նա լւանում էր, կարգի էր բերում, հանգարտեցնում էր երեխաներին: Աթոռի վրայ

կանգնած, նա ճաշ էր պատրաստում և սարքում էր անկողինները: Ամենից ծիծաղաշարժն այն էր՝ թէ նա ինչպէս էր ծառայում իր խորթ հօրը: Այդ ժամանակ նրա շարժւածքները դառնում էին առաւել արագ և աշխույժ. նա գննական հայեացքով նայում էր ուղղակի նրա աչքերին և կարծես աշխատում էր գուշակել հօր մտքերը: Հօրը հրամային չը սպասելով՝ նա դնում էր նրա առաջին կերակուրով աման կամ գարեջուրով շիշ: Իսկ երբ բանուորը պատրաստում էր գնալու, Կազեան արդէն կանգնած էր լինում դռան մօտ, նրա վերարկուն ուսով ձգած և փայտն ու գլխարկը ձեռին: Այդպիսի դէպքերում աղջիկն երբեմն գլխարկը ծածկում էր իր սեփական գլխին, որը բոլորովին թաղւում էր նրա մէջ—այդ ի հարկէ ծիծաղ էր շարժում: Առհասարակ՝ ինչ բան էլ նա անելիս լինէր, դէմքը միշտ ուրախ էր, իսկ նայելով փոսիկներին, որ համարեա երբէք չէին անհետանում նրա թշիկների վրայից, կարելի է ասել թէ ահա այս ըուպէիս կը ծիծաղի: Երբեմն պատահում էր որ բարձր ծիծաղում էր հօր ներկայութեամբ, այն ժամանակ վառարանի ետեւից երևում էին կրտսեր երեխաների զարմացած դէմքերը. դոքա հօր առաջ նստած էին լինում միշտ լուռ և մունջ և սկսում էին վազվզել և աղմուկ հանել, միայն երբ նա հեռանում էր: Կազեայի ծիծաղը նրանց

սիրտ էր տալիս, այնպէս որ փոքրերն իսկոյն աղմուկ էին բարձրացնում, և աւագ քրոջը դժուարութեամբ էր լաջողում հանդարտեցնել նրանց և ստիպել լռել հիւանդ մօր հանգստութեան համար:

Իսկ մօր առողջութիւնն այդ միջոցին լաւանում էր: Ես մինչև անգամ թույլ էի տւել նրան վեր կենալ անկողնից և երեկոյեան, միւսնոյն օրը եկայ տեսնելու թէ ինչպէս է նա իրեն զգում. նա նստած էր նստարանի վրայ, բայց դեռ սաստիկ թույլ էր: Ամուսինն արդէն վերադարձել էր գործարանից և կարգում էր լրագիր: Իսկ երբ ես դուրս էի գնում, նկատեցի որ արդէն սենեակում չէ. նա սպասում էր ինձ բնակարանիս դռան մօտ:

— Ես կուզէի ձեզ հետ խօսել, պարոն բժիշկ, սկսեց նա ընդհատող, խուլ ձայնով, խոժոռացւով դէմքը. այդպիսով նա կամենում էր ծածկել այն յուզմունքը, որ տիրել էր նրա հոգուն: — Գուցէ նա շատ կանուխ է վեր կացել:

Ես դիտմամբ չը հասկացող ձևացայ:

— Ո՞վ:

— Իմ կինս:

— Սակայն միք կարծիլ, — ասացի ես շատ լրջօրէն և անգամ խիստ, — միք կարծիլ թէ ձեր կոպտութիւնը և փնթփնթոցը ստիպեցին ինձ թույլ

տալ նրան ժամանակից առաջ վեր կենալ: Վրտանգն անցել է — այդ պատճառով նա անկողնից վեր կենալու թույլտուութիւնը ստացաւ:

— Ի՞նչ. — բացագանչեց բանւորը, բռունցքները սեղմելով: Նա ձեզ գանգատւել է իմ վրայ:

— Բոլորովին ո՛չ, ասացի ես երկիւղ կրելով մի դուցէ խեղճ կնոջը ծեծի, — նա միշտ պաշտպանում է ձեզ, ասում է որ դուք շատ բարի էք թէ նրա և թէ երեխանց նկատմամբ: Բայց նրան կուրացնում է սէրը — ես տեսնում եմ որ դուք անտանելի էք վարւում և՛ նրա և՛ երեխանց հետ:

— Վարւում եմ այնպէս, ինչպէս ինձ այդ դուր է գալիս, — արտասանեց նա ատամների միջով, — և ոչ ոքի խորհուրդ չեմ տալիս խառնել իմ գործերի մէջ:

— Այդ միայն ձեր գործերը չեն, — ընդհատեցի նրան, — այլև թույլերի գործն է, որոնց դուք ճնշում էք, իսկ թույլերին պաշտպանել կարող է ամեն մէկը, որ միայն ուզում է և կարող է, թէկուզ այդ ամբողջ պաշտպանութիւնը լինի ճշմարտութեան մի բառ՝ ճնշողին ուղղած:

Բանւորը ծիծաղեց դառն հեգնութեամբ:

— Ուրեմն ձեր կարծիքով նոքա անբախտ են, — ասաց նա, — իսկ ես բախտաւոր, ազատ մարդ, և ինձ ոչ ոք չի վիրաւորում:

Արտասանելով վերջին բառերը, նա թափ

2072



աւեց ձեռքը և սկսեց բարձրանալ սանդուղքով, բայց յանկարծ կանգ առաւ և շուռ եկաւ դէպի ինձ:

— Մարդս կարող է գազան դառնալ, — սկսեց նա խուլ ձայնով, — եթէ նրան գրգռում են, տանջում են, ձանձրացնում են մինչև այն ժամանակ, մինչև որ նրան կատաղութեան են հասցնում: Փորձեցէք աշխատել գործարանում գերմանացիների մէջ, սեղմեցէք ատամներն առաւօտից մինչև երեկոյ, որպէսզի մի բան չասէք և կրտսնէք՝ որքան կատաղութիւն կը կիտւի սրտի մէջ: Ամենահանդարտ անասնին կարելի է կատաղեցնել, եթէ շարունակ զարկենք նրան առանց մի որ և է պատճառի, իսկ այնուհետև սովորութիւնը բնաւորութիւն է դառնում: Սպասեցէք — նոքա ձեզ էլ կը հասնեն: Դուք երիտասարդ էք, ձեզ թւում է, որ ուժերը կը բաւեն չ'ընկճելու: Դուք դեռ սկսում էք ապրել... Զեզ էլ հալումսը կ'անեն: Զեր տակը կը փորեն, մինչև որ ձեզ բոլորովին կը թուլացնեն: Երբէք չէք հասնիլ ազնիւ ճանապարհով մտադրած նպատակին և չէք մնալ այն, ինչ որ էք այժմ: Կամ ուժասպառ կը զայրանաք կամ ստորութիւն կանէք, կուրանաք ձեր ազգականներին, լեզուն, հաւատը, մինչև անգամ ազգանունը...

Ասելով այս՝ նա կանգնած էր նեղ սանդուղքի վրայ, կիսով շուռ եկած իմ կողմը: Նրա յաղթան-

դամ մարմինն երևում էր աւելի բարձրահասակ և աւելի ուժեղ սանդուղքի վրայ կախած փոքրիկ լապտերի թույլ լոյսով: Իսկ նրա խօսքերի մէջ կար այնքան դառն հեգնութիւն և այնքան համոզմունք, որ նոքա խոր ընկան հոգուս մէջ: Բանւորը վերև գնաց, գլուխը կրծքին իջեցրած, իսկ հին սանդուղքը ճրճւում էր նրա ծանր քայլերի տակ...

«Կամ ուժասպառ կը զայրանաք կամ ստորութիւն կանէք, կ'ուրանաք ամենն ինչ որ... մայրենի է», կարծես դեռ երկար հնչում էր նրա ձայնն իմ տկանջիս: Բանւորի խօսքերը ճնշում էին ինձ, ինչպէս մի ծանր նախագուշակում: Առաջւայ զայրոյթի փոխարէն ես զգացի կարեկցութիւն դէպի Կազեայի խորթ հայրը:

Աղջիկը նորից սկսեց ճիշդ գալ ինձ մօտ կարգացած լրագիրների համար: Նրբեմն նա ինձ մօտ մնում էր աւելի երկրար և բոլորովին օտար և անծանօթ քաղաքի մէջ միակ մխիթարութիւնս և ուրախութիւնս էր: Նրա խօսակցութիւնն այնպէս զրաւում էր ինձ, որ ես մինչև անգամ վախեցայ, երբ մի օր նկատեցի նրա միշտ ուրախ և անհոգ դէմքը մտասուզւած, տխուր:

— Ի՞նչ է քեզ պատահել, Կազեա, — հարցրի ես նրան, — մի անբախտութիւն իս չէ՞ պատահել քո մոխրագոյն կատւին:

—Որ այդպէս է՝ ես ձեզ կասեմ, սիրելի բը-
ժիշկ, — սկսեց աղջիկը տխուր, — ես ինքս ոչինչ
հասկանալ չեմ կարող... Երեկ երեկոյեան ես ա-
ղօթք արի եւ պառկեցի: Հայրիկը կարծում էր, որ
ես արդէն քնած եմ եւ սկսեց խօսել մայրիկի հետ...
Մէկ ինչ որ աստիճանաւոր ասել է նրան, որ ինձ
պէտք է արտաքսեն... գիտէք... արտասահման:

Ես սրտանց ծիծաղեցի:

—Քեզ արտաքսել: Այ թէ վտանգաւոր անձ
ես... — Տեսնում ես՝ ինչպէս վատ է, երբ փոքր ե-
րեխաները գաղտնի ականջ են դնում, ինչ են
խօսում ծնողները: Դու չես հասկացել՝ բանն ինչ-
պէս է: Գերմանացիք խօսեցին կռուում երեխանց
հետ եւ չեն խլում նրանց իրանց մայրերից: Ամե-
նահաւանականն է, որ այս ամբողջ պատմութիւնն
երազումդ ես տեսել:

—Երբ ասում էին, որ իմ «Հարազատ» հայրը
«այնտեղից» էր եւ որ ես...

—Յիմարութիւններ ես ասում, զաւակս...
Հաւատացնում եմ քեզ՝ ոչ ոք քո մասին մտածել
անգամ չէ անհանգստանում:

—Դուք ճշմարէտ էք ասում, — ասաց աղջիկը
նայելով աչքերիս մէջ:

—Հաւատացնում եմ քեզ՝ ոչ մի այդպիսի
բան կարելի չէ:

—Ինձ էլ այդպէս է թւում, — բացագանչեց

Կազեան, իսկոյն հանգստանալով եւ մոռանալով
իմ մռայլ ենթադրութիւնները: — Զէ որ ես նրանց
ոչ մի վատ բան չեմ արել: — Ախ, եթէ դուք գի-
տենայիք, ինչպէս էր լաց լինում Մարթան, երբ
նրանց արտաքսում էին: Խրճիթի մէջ այլ եւս ո-
չինչ չը կար. ոչ անկողին, ոչ աթոռ, ոչ բաժակ —
ամեն բան ծախել էին: Միայն շորերն էին կապոց-
ների մէջ դարսած անկիւնում: Երբ ես եւ մայրիկը
եկանք նրանց մօտ մնաս բարեւ ասելու, Մարթան
եւ երեխաները՝ բոլորն էլ նստած էին եւ դառնա-
պէս լաց էին լինում: Այո, այնտեղ բոլորն էլ լաց
էին լինում, միայն երեք գերմանացի, որոնք բը-
նակում են միւսնոյն տանը — դուք երեւի ճանա-
չում էք հիւսնի աշակերտներին — սաստիկ ծիծա-
ղում էին: Իսկ Մարթան մի կով էլ ունէր — նա
այնպէս բառաչում էր, երբ նրան ապոռատնից
դուրս բերին, որ երեխաներն աւելի լաց եղան:

Պատմեցին ինձ այս բոլոր մանրամասնութիւն-
ները, աղջիկը գունատեց եւ կարծես քարացաւ
լայն չռած աչքերով: Ես աշխատեցի, որ չափ կա-
րելի է շուտով գլարճացնել նրան:

— Լսիր, Կազեա, երեկ գնեցի շաքարեղէն մի
փոքրիկ բերանի համար, որ սիրում է ծիծաղել, —
ասացի ես, բանալով սեղանս:

Կազեան վեր թռաւ թռչնակի պէս իմ ծուն-
կից եւ սկսեց սեղանի արկղին տէրութիւն անել:

Տխուր մտքերը ցրեցին շաքարեղէնի տուփի տեսքից:

Կազեայի ծնողները, ասեսելով ինչպէս արտաքուսում են գերմանական Պոզնանից օտարահայտակ լեհացիք, պարզ էր որ երեակալել էին թէ աքսուլածների ցուցակի մէջ կը լինի և ութ տարեկան երեխան: Չէ որ այդ անհետկէթուծիւն է. միթէ երեխաների վերաբերմամբ այդպէս վարուում են:

Ես էլ, Կազեան էլ շուտով մոռացանք նրա խորթ ծնողներից գաղտնի կերպով լսած խօսակցութիւնը: Աղջիկն ուրախ էր և առաջնայ պէս անհոգ: Նա շատ ուրախանում էր որ շուտով հասնելու է ձմեռը, և սպիտակ, փափուկ ձիւնի վրայ խաղալու միտքը հրճեցնում էր նրան: Կազեան պատմում էր ինչ իր փոքրիկ, չարդախի վրայ պահած սահնակի մասին, որ նրա համար շինել էր Ստասեկը, գործարանի նոյնպիսի բանուորի որդին, որպիսին էր և նրա հայրը:

Հասաւ ձմեռը, ձիւնի պակասութիւն չըկար: Կազեան Ստասեկի հետ շինեցին ձիւնի մարդ բաղում, պատուհանիս տակ: Երեխաների հրճանքը սահման չունէր, երբ մարդն աւարտած էր: Առողջ կարմրութիւնը զարդարում էր նոցա այտերը և դժւար է նկարագրել թէ ինչպիսի զւարճութեամբ նայում էր Կազեան իր շինած, իսկապէս անճոռնի գործին, և ինչպիսի զարճութեամբ

թռչկոտում էր նրա շուրջը: Նրա ամբողջ փաքրիկ էութիւնը կեանքի առողջութեան և ուրախութեան կենդանի պատկեր էր: Ես այն ժամանակ ափսոսացի, որ չըգիտեմ նկարել:

Յուշեարի կիսին վերագառնում էի ես մի օր տուն՝ այսպէս ժամի 6-ին երեկոյեան և բարձրանալով սանդուղքով, նկատեցի մէկ ինչ որ սև կապոյի նման բան անկիւնի մէջ խրւած: Այդ անորոշ առարկան կարծես շարժեց իմ մօտենալու ժամանակ, ինչ այդ հետաքրքրեց — ես մօտեցայ աւելի: Յանկարծ լուեց սրտաճմլիկ ճիչ — և ո՛հ, զարհուրանք: Այդ վայրենի աղաղակի մէջ ես ճանաչեցի — իմ փոքրիկ բարեկամի ձայնը:

Կազեա, բացագանչեցի ես:

— Ա՛խ, այս դուք էք: Ես կարծում էի... ես կարծում էի... Աղջիկը դուրս վազեց անկիւնից և կարծես մոռացութեան մէջ՝ թաթիկներով սկսեց բռնել իմ փեշերից:

— Ի՞նչ է քեզ պատահել, Տէր Աստուած: Ի՞նչ է քեզ պատահել...

— Կամաց, — շշնջաց նա, — կամաց, կը լսեն...

— Ո՞վ կը լսի, ի՞նչ է քեզ պատահել: — Դու կը մըսես միայն մէկ շորի մէջ:

— Կամաց, — կրկնում էր աղջիկը, նայելով շուրջը վախեցած աչքերով, — պ. բժիշկ, կամաց...

—Արի այս ըոպէիս ինձ հետ, — ասացի ես խիստ, — ես կը տանեմ քեզ մօրդ մօտ:

Աղջիկը, որ միշտ խոնարհ և հնազանդ էր, սկսեց փախչել ինձանեց առանց ետ նայելու, սակայն ես հասայ նրան դռների մօտ և բարձրացրի թւերիս վրայ: Նա դողում էր ամբողջ մարմնով և շարունակ, կարծես՝ մոռացութեան մէջ կրկնում էր կամաց... կամաց...

Զը կամենալով վախեցնել Կազեայի մօրը, ես տարայ աղջկան իմ բնակարանը: Տեսնելով ծանօթ առարկաներ, աղջիկը դադարեց դողալ, բայց երկու ձեռներով փաթաթեց իմ վզովս և սկսեց լալ: Ոչ մի հանգստացնող խօսք չէր ազդում նրան: Յանկարծ նա բարձրացրեց գլուխը և սկսեց սարսափով նայել դռանը:

— Գալիս են այստեղ, գալիս են, — ճչաց յանկարծ աղջիկը և այնպէս սաստիկ սեղմեց իմ պարանոցը, որ դժւարութեամբ կարողացայ շունչ քաշել:

«Երևի, խորթ հայրը ծեծել է, — մտածում էի ես, — խեղճիկը սաստիկ վախեցած է»:

— Մի վախի՛ր, ես ոչ ոքի այստեղ ներս չեմ թողնիլ և կը պաշտպանեմ քեզ: Ոչ ոք քեզ վատ բան չի անիլ, — մխիթարում էի ես նրան:

Աղջիկը շարունակ նայում էր դռների ուղղութեամբ և սեղմւում էր ինձ: Սանդուղքի վրայ

տղամարդու քայլերը անցան բնակարանիս դռան մօտով և հեռացան:

Յանկանալով հանգստացնել և ուրախացնել աղջկան, սկսեցի պատմել նրան այնպիսի ծիծաղաշարժ պատմութիւններ, որոնք մի ուրիշ ժամանակ կը ստիպէին նրան ծիծաղել արտասուելու չափ, իսկ այժմ նա լսում էր ինձ բաւականին ուշի ուշով, բայց ուրախութեան մի նշույլ անգամ չը կար նրա գունատ դէմքի վրայ: Յանկարծ Կազեան սկսեց աւելի սաստիկ լաց լինել և դողալ. բնակարանիս դռան մօտ լսեց զանգի ձայնը: Այդ մայրն էր եկել որոնելու Կազեային. խեղճ կնոջ աչքերը կարմիր էին, նա ևս յուզւած էր:

— Ի՞նչ անեմ, — սկսեց նա՝ կոտորտելով ձեռները, — կամենում են սահմաններից դուրս քշել իմ երեխային: Եթէ մենակ դա լինէր — ես էլ կերթայի դրա հետ, բայց ինչ անեմ որ ինքս էլ մանրերի տէր եմ: Մի՞թէ արդարութիւն չը կայ աշխարհիս երեսին: Մի՞թէ Աստուծ մեզ մոռացել է: Զէ՛ որ նա ամեն բան տեսնում է, ինչ որ մեզ հետ անում են:

Մինչ այդ՝ Կազեան զարհուրած, անշարժ հայեացքով նայում էր մօր դէմքին:

— Հանգստացէ՛ք վերջապէս, — ասացի ես, — աշխարհումս չը կայ մի այնպիսի սարսափելի կառավարութիւն, որը խի ութը տարեկան երեխային

իր ընտանիքից: Մենք խնդիրք կը տանք բարձրագոյն ատեանները—և հաւատացնում եմ ձեզ, ամեն բան լաւ կը լինի: Զէ՞ որ գերմանացիք քաղաքակրթւած ժողովուրդ են:

—Հրամայւած է որ մինչև մարտի 1-ը աքսորեն սրան սահմաններից դուրս:

—Ե՛, մինչև այդ ժամանակը մենք դեռ ևս վեց շաբաթ ունենք: Վեց շաբաթուայ ընթացքում այս գործը կարող է հասնել անգամ մինչև սէյմը:

Յուսոյ կայծ փայլեց կնոջ աչքերի մէջ:

—Գերմանացիք չար են, ատում են լեհացոց, բայց հաւատում են Աստծուն, թէև նոքա բողոքականներ են: Ես այս որբիկին համարեա թէ օրօրոցից եմ մեծացրել, խնամել եմ ինչպէս իմ սեփական երեխային: Եւ առանց սրան ես խնչ պէտք է անէի: Զորս մանր երեխայ... սա այնպէս ամեն բանի մէջ ինձ օգնում է, և ջուր է բերում, և օրօրոցն է օրօրում, և անկողիններն է սարքում: Ամենքս սրան այնչափ սիրում ենք, մինչև անգամ մարդս, թէև նրա համար սա օտար է:

—Ես դրա մասին կը խօսեմ ձեր ամուսնու հետ: Մենք կը պայմանաւորուենք՝ խնչպէս է հարկաւոր բողոքել և ոչ մի բանով ոչ ոքի չեմ տալ Կազեային:

Ես նայեցի աղջկայ երեսին: Նրա աչքերը ցամաք էին, բայց ամբողջ գլուխը այրւում էր

կարծես կրակի մէջ: Դէմքի արտայայտութիւնից երևում էր որ նա հասկանում էր մեր խօսածը:

—Դէհ, արի ինձ հետ, աղջիկս, — ասաց բանւորի կինը, դիմելով Կազեային, — երեխան ճղաւում է վերևում, իսկ ես շատ գործ ունեմ, — հարկաւոր է նրան օրօրել:

Կազեան գնաց մօր ետեւից՝ մի քիչ կողքէ կողք ընկնելով, կարծես սաստիկ թուլացած լինէր:

Իսկ երբ լսեցին տուն վերադարձող բանւորի քայլերը, ես խնդրեցի նրան մտնել իմ մօտ գործի վրայ խօսելու:

—Տանը ընթրիքս կը սառչի, — ասաց նա տըհաճութեամբ, — իսկ մարդս վերադառնում է տուն գալի ախորժակով, յոգնած ամբողջ օրւայ չարանքից:

—Ինձ մօտ ուտելու բան կը գտնւի, — ասացի ես նրան, — կը խօսենք, զարեջուր կը խմենք:

Շտապեցի առջևը դնել երշիկ, հաց, պանիր և զարեջուր՝ կամենալով յագեցնել նրա սովածութիւնը:

—Դուք դեռ չը գիտէք, բարեկամ, — սկսեցի ես տեսնելով որ նա կերաւ ախորժակով, — որ այսօր ոստիկանութիւնից մի կարգադրութիւն է ստացւել, որի հիման վրայ Կազեան պէտք է մինչև մարտի մէկը արտաքսւած լինի տէրութեան սահմաններից դուրս:

Նա գուռնատեց և նայեց ինձ սկզբում զարմացած, չ'արտասանելով ոչ մի բառ:

— Ի՞նչ է, չէի ասում կնոջս թէ ոստիկանութեան տեղեկութիւններ հաւաքելը, հարց ու փորձ անելը ոչ մի լաւ բան չեն գուշակում: Հարկաւոր չէր այդպէս սիրել օտար աղջկան: Մեծ բան է որ մէկ աղջկով պակաս կունենանք:

— Մէկ բողազ կը պակասի, այդ է՝ էլի, — փրնթփնթում էր նա ականերու գրգռութեամբ, մինչև անգամ յուզմունքից խեղդւելով, իսկ աչքերի մէջ երևում էին արտասուքներ:

— Ի՞նչպէս: Դուք թո՞ւլ կը տաք որ ութ տարեկան երեխային...

— Ապա ես քնչ անեմ: Մի բան կ'օգնեմ, եթէ մինչև անգամ ոտներն ընկնեմ աղաչեմ: Այն էլ ասենք, հէնց մեր որդոց համար սուելի լաւ կլինի, եթէ չեն ապրիլ: Այս շան կեանք է: Ձեզ կըթւած մարդկանց թւում է որ այստեղ մենք մի կերպ ապրում ենք էլի: Երեսներիս թքում են — լուր, նայում են արհամարանքով — Ժպտա՛, հալհոյում են հայրենիքդ, հաւատդ, բոլորը, ինչ որ թանկագին է քեզ համար — նոյնպէս լուր: Իսկ երբ արդէն կը կորցնես վերջին համբերութիւնդ և կ'ուզես գնքսել վիրաւորողին — պահիր բռունցքներդ գլրպանիդ մէջ, թէ չէ թէ գու, թէ երեխաներդ մինչև անգամ չոր հաց էլ չէք ունենալ:

— Այդ բոլորը հիանալի է, — ընդհատեցի ես նրան, — բայց բանը Կազեայի մասին է: Դուք իբրև նրա բնական խնամակալ պէտք է պաշտպանէք նրան: Մթթէ ձեզ համար միւսնոյն է՝ ապրում է նա, թէ ոչ և դրտեղ է ապրում:

— Միւսնոյն է, — բղաւեց բանւորը, — առանց այդ էլ գլուխս պտոյտ է գալիս:

Նրա դէմքի արտայայտութիւնը բարկացածից դարձաւ յանկարծ տխուր. նա լուռ նայում էր իր դատարկ ափսէին:

Յետոյ մինչև անգամ չը հրաժարւելով ինձանից, նա դուրս եկաւ սենեակից, սաստիկ բաղխելով դուռը:

Միւս օրը բանւորը արեց ամեն բան, ինչ որ նրա ուժը պատում էր, որպէսզի պաշտպանէ Կազեային: Ուղարկեց կնոջը աղջկայ հետ կոմմիսարի մօտ, այնտեղ կինը լաց էր լինում և աղերսում էր չը բաժանել իրան երեխայից: Կոմմիսարը կամ իսկապէս չը հասկացաւ, ինչ էր ուզում կինը, թէև սա աշխատում էր որչափ կարելի է լաւ խօսել գերմաներէն, կամ չէր ուզում հասկանալ, — ասաց միայն որ այս անիծած լեհացիք օրօրոցից ներշնչում են մանուկներին թէ ամեն մի գերմանացի — մարդակեր է, և հրամայեց որ գլխիցը ռադ լինեն: Իսկ երբ երեկոյեան կոմմիսարի մօտ գնաց բանւորը, բացատրեց թէ բանն ինչպէս է և յա-

մառութեամբ պահանջում էր պատասխան,—կոմ-
միսսարը խոստացաւ դիմել իշխանութեան և ամեն
բան սարքել: Այս ամենը պատմեց ինձ երեկոյեան
Կազեայի մայրը:

Ես բոլորովին չէի կասկածում որ բանը մին-
չև աղջկան սահմաններից դուրս քշելը ոչ մի
կերպ չի հասնիլ, բայց երբեմն ինձ ճնշում էր
մէկ ինչ որ անորոշ նախազգացում և ես թանգ
կը վճարէի, միայն թէ գարունքը շուտով անցնէր,
և մենք բոլորս հանգստանայինք:

Փոքր առ փոքր Կազեան սկսեց իր հին
պարապմունքները և սովորութիւնները, բայց նա
կարծէք էլ առաջւայ անհոգ երեխան չէր: Եր-
բեմն ուրախ ծիծաղելով, նա յանկարծ լռում էր
և երկչոտութեամբ շուռ էր գալիս, ետ էր նա-
յում և գունատում, կարծես սպասելով մի որ և է
հալածանքի: Նա ոկսեց վախենալ միտնից և եթէ՝
գալով ինձ մօտ լրագրի համար, մնում էր մի քիչ
աւելի երկար,—այնպէս էր սկսում դողալ տեսնե-
լով մութ սանդուղքը, որ ես ստիպւած էի լինում
հասցնել նրան մինչև իրանց սենեակի լուսաւորւած
դռները,—միայն այդ ժամանակ նա հանգստանում
էր: Երևում էր որ միւսնոյն միտքը հալածում էր
նրան անդադար: Մէկ օր աշխույժ գրուցի ժամանակ
նա յանկարծ լռեց և իմ հարցիս թէ ինչ է պա-
տահել, —ասաց.

—Մեր թագաւորը որդիք ունի:

—Այո, ունի, թոռներ էլ ունի:

—Թոռներ էլ ունի: Նա երեւի նրանց չի սի-
րում... խօ՛ կան այնպիսի մարդիկ, որոնք երեխա-
ներին չեն սիրում:

—Ոչ. նա սիրում է իր թոռներին:

—Իսկ նա խո գիտէ որ երեխաները «այնպէս»
չեն կարող ապրել, մենակ... առանց մեծերի:

—Գիտէ և անկասկած չի թոյլ տալ որ իր
տէրութեան մէջ մի որևէ երեխայի վերաւորեն...

Կամ մի ուրիշ անգամ նա հետևեալ հարցը
տւեց.

—Ձեր այն տորճանակը լցած է. այն, որ
արկղի մէջն է դրւած:

—Միշտ լցւած է:

—Իսկ որքան չար մարդ կարելի է նրանով
սպանել:

—Այստեղ չը կան այնպիսի չար մարդիկ, ո-
րոնց հարկաւոր լինէր սպանել:

—Իսկ նոքա, որ երեխաներին են խլում:

—Ո՛ր... այդպիսիներին ես կը կարողանայի պատ-
ժել...

—Սիրելի պարոն բժիշկ, —ասաց աղջիկը, փա-
թաթեւելով պարանոցովս.—Հայրիկս էլ կ'օգնէր
ձեզ... նա սաստիկ ուժեղ է—նա միայն երևում է
այդպէս խիստ, բայց այդ միայն այնպէս... երբ

ոչ ոք չի տեսնում, հայրիկը մինչև անգամ գլուխս է շոյում:

— Իսկ դու հայրիկին սիրում ես:

— Ինչո՞ւ համար չը պետք է սիրեմ:

Երբեմն նա կարծես թէ երազում էր բարձրաձայն մէկ ինչ որ ծածուկ տեղերի մասին, որտեղ կարելի է այնպէս թաղ կենալ, որ ոչ ոք չի գրտնիլ, կամ այնպիսի կախարդի մասին, որը կարող է տալ աներևոյթացնող զգալ: Մինչ այդ՝ աղջիկը օրէցօր գունատւում էր և գունատւում: Միշտ նա մի բանից վախում էր, ետ էր նայում և համարեա թէ միշտ նրա դէմքի արտայայտութիւնը կրում էր անհանգստութեան դրոշմ:

Ամբողջ ժամանակ սաստիկ ցրտեր էին և ձիւնէ մարդը, որ շինել էր Կազեան Ստասեկի հետ միասին, դեռ կանգնած էր իմ լուսամուտի տակ:

— Գիտե՞ք՝ երեխան կը մեռնէր, եթէ նրան մի որևէ տեղ տանէին այսպիսի բուքին, — ասաց ինձ մի օր Կազեան՝ նստած ինձ մօտ սենեակում:

Ոչ աղաչանքը, ոչ բարկութիւնը ոչինչ չէին կարող ստիպել Կազեային մոռանալ իրան տանջող միտքը:

Մի օր փետրւարի կիսին ընտրեցի մի այնպիսի բոլակ, երբ բանւորը պարապւած էր գործարանում, իսկ Կազեան վազել էր ջրհորը ջրի համար,

և գնացի նրա մօր մօտ իմանալու թէ ինչ հետևանքներ ունեցան նոցա աշխատանքները կոմմիսարի մօտ:

— Հարկաւոր է խոյս տալ նոր ընդհարումներից ոստիկանութեան հետ, — ասացի ես, — այդ կարող է վատ ազդել նրա առողջութեանը:

— Ի՞նչ անեմ, ի՞նչ, — բացագանչեց կինարմատը, — մարդս գնաց ոստիկանատուն, — այնտեղ նրան ասացին որ պատասխանը դեռ չէ եկել:

— Գուցէ հարկաւոր է վկայական գրել ոստիկանատուն թէ Կազեայի առողջութիւնը չէ թոյլ տալիս նրան ճանապարհ ընկնելու: Իսկ մինչև այդ ժամանակ գուցէ ստացւի թուղթը:

— Ես թէ եմ իմանում, — տխրութեամբ ասաց կինարմատը. — Գուցէ և այդպէս լաւ կը լինէր: Գուք ինձանից լաւ գիտե՞ք թէ ինչ պետք է անել:

— Ձէք նկատում որ Կազեան վերջին ժամանակ նիհարել է և գունատւել:

— Ի հարկէ՞ նիհար էլ, տխուր էլ է դառել: Ոչինչ չէ ուտում և կարծես միշտ մի բանից վախում է:

Ես գրեցի՝ համաձայն ընդունւած բանաձևի մի վկայական, կինարմատը տարաւ այն ոստիկանատուն, բայց չ'ընդունեցին. Ռուսահպատակին սահմաններից դուրս քշելը լետաձգել կարելի է, — ասացին կինարմատին, — սակայն միայն այն ժամա-

նակ, երբ վկայականը գրած կը լինի գերմանացի բժշկի ձեռքով:

Մեր տեղում բացի ինձանից, կար միայն մէկ բժիշկ—բժիշկ Ռեզլեր: Այդ բժիշկը լրջամիտ և ազնիւ մարդու անուն ունէր: Գնացի նրա մօտ և պատմեցի ամբողջ պատմութիւնը, ի միջի այլոց զարձրի նրա ուշադրութիւնը և այն ցնցումների վրայ, որոնց վկայ էի եղել ինքս ոստիկանութեան առաջին այցելութեան ժամանակ:

Բժիշկն ուշադրութեամբ լսեց ինձ:

—Գիտէք, այդ հաւանական բան չէ,—ասաց նա հանգիստ ձայնով,—այդ միայն ցոյց է տալիս պրուսական ոստիկանութեան գովելի ճշտակատարութիւնը: Բայց թէկուզ և այն, որ աղջիկը անչափահաս է... Ասենք, ես չեմ զարմանում որ նրա խնամակալները, ռամիկ մարդիկ, լեղապատառ են եղել, բայց դուք՝ կրթւած մարդ... Այդ ճշմարիտ որ ծիծաղաշարժ է...

—Տւէք խնդրեմ այդ վկայականը գոնէ միայն այդ ռամիկ մարդկանց և նոյն իսկ այդ երեխայի հանգստութեան համար:

—Ե՛, եթէ ինձանից պահանջում են վկայական, ես կարող եմ տալ, միայն այդ բոլորովին աւելորդ է: Լեհացիք ի բնէ տրամադիր են մեն բան չափազանցելու:

—Ես բոլորովին այնպէս եմ նայում այդ ե-

րեխայի գործին, ինչպէս և դուք, մինչև անգամ հաւատացած եմ որ նրան չեն խլիլ ընտանիքից: Վախում եմ միայն որ ոստիկանութեան նոր այցելութիւնը կարող է առաջւանից աւելի վախեցնել երեխային, խորթ մայրն էլ նորածնին ծիծ է տալիս,—երկուսի համար էլ վնասակար է վախենալ:

—Բայց այդ միայն թիւրիմացութիւն է, ուրիշ ոչինչ... Ձէ՛ որ աղջիկը ութը տարեկան է,—ասում էք դուք:

—Այո՛, ութը:

—Դէհ, ուրեմն էլ ինչ խօսելու բան կայ: Հասարակ թիւրիմացութիւն է,—նորից կրկնեց գերմանացին:

Երբ ես նրան երկրորդ անգամ խնդրեցի, նա համաձայնեց ուղեկցել ինձ և լուրջ, կենդրոնացած տեսքով մտաւ բանւորի սենեակը: Ես ցոյց տւի նրան աղջկան, որը դողաց ամբողջ մարմնով, հէնց որ լսեց գերմաներէն լեզուն: Բժիշկ Ռեզլերը զըննեց նրան աւելի ուշով և անխախտելի հանգստութեամբ ասաց ինձ.

—Երեխան առողջ է—նեարդները մի փոքր զրգուած են, բայց այդ դեռ հիւսնդութիւն չէ, իսկ կեղծ վկայական ես տալ չեմ կարող: Ձէ՛ որ նեարդայինութիւնը և դիւրագրգռութիւնը անկարելի է հոգեկան հիւսնդութիւն անւանել:

Հրաժարւելով փողից, որ առաջարկեց նրան

Կազեայի մայրը, բժիշկը լուրջ կերպով գլուխ տւեց մեզ ամենքին և դուրս գնաց:

Միւս օրը գնացի կոմմիսարի գիւնատուներ: Կոմիսարը գրում էր մէկ ինչ որ յայտագիր և կարծես թէ սաստիկ զբաղած էր: Սակայն նա մի րոպէ բարձրացրեց գլուխը և հարցրեց՝ քնչ է ինձ հարկաւոր:

— Ես եկայ Մատթէոս Կրաւչիկի որը աղջկայ գործով. այդ ութը տարեկան աղջկան հրամայւած է արտաքսել սահմաններից դուրս մինչև գարունքը:

— Դուք նրա խնամակալն էք:

— Ես բժշկում եմ այդ ընտանիքը և կ'ուզէի...

— Ուղարկեցէք այստեղ այդ երեխայի խնամակալին, ինձ պատւիրած չէ ամեն մէկ գնացող եկողի հետաքրքրութիւնը յագեցնել:

Ասելով այս բառերը՝ նա նորից խորասուզւեց իր գրութեան մէջ: Ես վախում էի յամառութեամբս վնասել Կազեայի գործին, որի ամբողջ վիճակը գտնւում էր այդ մարդու ձեռքում և դուրս եկա՝ գիւնատներից՝ անաջողութիւնից զայրացած: Տուն վերադառնալիս սրտահեցի Կազեայի խորթ մօրը. նա սաստիկ յուզւած էր: Բանից երևաց որ ամուսինը երեք օր է որ կուլել է մի ուրիշ բանւորի—գերմանացու հետ: Խօսք էր բացւել իշխան Բիսմարկի մէկ ինչ որ նոր ճառի մասին և վէճը բռնուցքների էր հասել: Ոստիկանութիւնը միջամտել էր և

Կազեայի խնամակալի վրայ տուգանք էր դրել. յայտարարելով այդ դատավճիռը, ոստիկանը յանդիմանաբար հարցրել էր. «Դ՞ուրս է քշւած սահմաններից այն քո՞ծը»: Բանւորը պատասխանել էր թէ բացի ոստիկանից և կոմմիսարից Մ—ում կայ դեռ ևս լանդրատը Ս.—ում, պրեզիդենտը Պոզնանում, վերջապէս՝ մինիստրը, պետական խորհուրդը,—և որ նա գիտէ թէ ուր պէտք է դիմել:

— Ոչ մի լաւ բան սրանից դուրս չի գալ,— աւելացրեց իր կողմից կինը, վերջացնելով պատմութիւնը: Գերմանացիք պէր են և վրէժխնդիր, և քնչով խեղճ մարդը նրանցից պաշտպանւի: Մահի ու գերմանացու ճանկերից չես փախչիլ,—ասաց նա հոգոց հանելով:

Կազեան հարեանցօրէն լսել էր իր խնամակալի վէճի մասին ոստիկանի հետ և երևում էր որ սաստիկ անհանգստացած էր գրանով: Ամեն մի անսպասելի աղմուկ վախեցնում էր նրան, նա երկիւղով ետ էր նայում, խաչակնքելով երեսը և կրկնելով աղօթքի բառերը:

— Ինձ պառաւ Մարիամը ասաց որ բաւական է երեսը խաչ հանել—ամեն չար բան կ'անցնի,—բացատրեց ինձ աղջիկը:

— Այո՛: Իսկ քնչ է քեզ ներկայանում, երբ դու վախենում ես:

— Իմ մէջ ամեն բան դողում է... Ինձ թւում

է թէ ինձ արդէն տանում են: Մարիամն ասում է որ ամեն երեխայ ունի իր պահապան հրեշտակը— ուղի՞ղ է այդ:

— Այո, ունի,— ասացի ես, կամենալով հանդատացնել նրան:

— Եւ նա միայն նայում է, որ երեխային ոչ մի վատ բան չ'անեն, էլ ոչինչ գործ չ'ունի:

— Այո, նա հսկում է երեխայի վրայ գիշեր ցերեկ:

— Իսկ նա ոստիկանից ուժե՞ղ է:

— Մինչև անգամ միասին վերցրած երկուսից էլ ուժեղ է:

— Իսկ եթէ երեքը լինին:

— Նա ամբողջ զօրքից ուժեղ է:

— Ուրեմն նա չի թողնիլ որ երեխային խլեն մօրից:

Ես արդէն չը գիտէի թէ ինչ անեմ Կազեայի հետ: Միշտ նա զբաղւած էր բացառապէս միևնոյն մտքով: Աղջկայ մայրիկից իմացայ որ նրա ամուսինը խնդիրք է տւել լանդրատին:

— Դուք չէք կարող երևակայել թէ որչափ դիւրագրգիռ է դառել մարդս վերջին ժամանակ,— աչքին թող ոչ ոք չ'երևայ,— ասաց ինձ կինարմատը:

Հասաւ փետրւարի վերջին օրը: Արևն այնպէս սրտազրաւ կերպով լուսաւորում էր, որ վճռեցի դուրս գնալ մի քիչ զբօսնելու: Յանկարծ անցքում

լուեցին տղամարդու ծանր քայլեր— մի անորոշ նախազգացում դրդեց ինձ նայել դռանը: Սանդուղքի վրայ տեսայ երկու ոստիկան, որոնք դիմում էին չարդախ՝ Կազեայի խորթ ծնողների սենեակը: Ես շտապեցի նրանց ետևից և հէնց այն բոլորին, երբ նոքա մտան, երևացի բանւորի սենեակի դռներում:

Մայրը նստարանի վրայ նստած ծիծ էր տալիս երեխային, իսկ Կազեան աւելում էր սենեակը: Երբ կինարմատը նկատեց ոստիկաններին, վեր թրուաւ տեղից, դողաց ամբողջ մարմնով և կանգնեց կարծես քարացած: Իսկ նրանցից մէկը՝ մօտենալով աւելի հարցրեց. — «Սա է այն երեխան», — Կազեան վայրենի ճիչ արձակեց և թագ կացաւ սեղանի տակ: Ծնկների վրայ կանգնած՝ նա այնպէս ամուր սեղմեց պատին, կարծես ուզում էր ճեղքել նրան իր սեփական մարմնով, իսկ աչքերը լառեց անշարժ, առանց մի որ և է արտայայտութեան ոստիկան՝ դէմքին: Եւ քանի սա մօտենում էր նրան, նրա աղաղակները դառնում էին աւելի բարձր և յուսահատ: Ոստիկանի երեսի վրայ սովորական կոշտ մռայլ արտայայտութեան փոխարէն նկատւում էր անհամբերութիւն և զարմանք:

— Das dumme Ding (Ֆիմար իր). թնչ է բղավում:

Այս ասելով նա քաշեց երեխայի ձեռքից:

Աղջիկը վալը ընկաւ գետնի վրայ՝ փրփուրը շրթներին, նրա ձեռները և ոտները ցնցուում էին: Նրան պատահեց ջղաձգութիւն: Ետ մղելով ոստիկանին, շտապեցի օգնութեան:

— Ի՞նչ է սրան պատահել, — հարցրեց զարմանքով ոստիկանը:

— Ցնցումներ են, — ասացի ես նրան. — Երեխան միայն ութը տարեկան է, նա կարող է մեռնել այս կաթլաճից. մթթ է ամօթ չէ զինուորի համար վերաւորել մանկան:

— Մթթ է ես մեղաւոր եմ, — պատասխանեց ոստիկանը բարձրացնելով ուսերը, — ես գնում եմ, ուր որ ինձ ուղարկում է իշխանութիւնը:

— Հեռացէք այստեղից որչափ կարելի է շուտով, — բացագանչեցի ես, — աղջիկը երբ ուշքի կը գայ՝ ձեզ չը պէտք է տեսնի այստեղ: Ոչ մի իշխանութիւն չէ կարող հրամայել սպանել խեղճ հիւանդ երեխային:

Ոստիկանները դիմեցին դէպի դռները:

— Հարկաւոր է տեղեկացնել այս բանի մասին կոմմիսարին, — ասաց մէկը միւսին, — երեխան ուղիղ որ փոքր է և հիւանդոտ: Բայց օրէնքի մէջ չէ որ պարզ ասած է...

Մի քանի րոպէից Կազեայի անդամները դադարեցին ցնցել:

Այն ժամանակ թւերիս վրայ առայ նրան և

պառկեցրի անկողնի մէջ. նա ոչինչ չէր լիշոււմ, երեսը հանգիստ էր, միայն աչքի էր զարնում յոգնածութեան արտայայտութիւնով, աչիկները փակուում էին — նա քնել էր ուզում. քնեց նա և քնած էր անհանգիստ քնով երկու ժամ: Սպասում էի երեխայի զարթնելուն, որովհետեւ միայն այդ ժամանակ կարող էի տալ պատրաստած դեղը: Յանկարծ Կազեան արթնացաւ, նստեց մահճի մէջ, սկսեց աղաղակել և զառանցել:

Ես գրկեցի աղջկան, խօսում էի նրա հետ, աշխատում էի հանգստացնել նրան — բոլորն ի զուր էր, նա ինձ չէր լսում և չէր հասկանում: Լայն և ապուշ բացած աչքերը յառած էին մի կէտի, որտեղ երևի գտնուում էր մէկ ինչ որ սարսափելի, միայն իրեն համար նկատելի առարկայ, իսկ մարմինը ցնցուում էր և դողում էր կարծես մի թռչնակ վայրենի գազանի ճանկերում: Մօր օգնութեամբ աղջկայ բերանը ածեցի պատրաստած դեղը, բայց պէտք է ասած, այն ջանքերը, որ ստիպւած էինք այդ բանի համար գործ դնել, երևացին նրան մի ինչ որ զարհուրելի բան, որովհետեւ նեարդային կաթլաճը նորից կրկնեց և նույնչափ սաստիկ էր, ինչպէս և առաջինը:

Այնուհետեւ նորից սպառկեցին ոյժերը և նա տենդի մէջ էր ու զառանցում էր: Մայրիկը կամաց լաց էր լինում՝ վախենալով արթնացնել աղջկան,

և ամեն ըոպէ դնում էր նրա գլխին ցուրտ, սառուցով ջրի մէջ թրջած երեսսրբիչը: Մեծ երեսաները ուտելու բան էին խնդրում, իսկ ծծկերը, որին մայրը կերակրել էր նեարդային զրգուումից փչացած կաթով, շարունակ լաց էր լինում և հիւանդացել էր: Բանուորը ճաշին վերադարձաւ տուն ինչպէս միշտ՝ յօնքերը կիտած և միայն գունատւեց, երբ կինը ասաց նրան թէ աղջիկը հիւանդացել է՝ վախենալով ոստիկաններից: Երևում էր որ Կազեայի խորթ հայրը այդ օրը բոլորովին ախորժակ չ'ուներ: Վերադառնալով քաղցած տուն և աղջկան հիւանդ գտնելով, նա համարեա թէ ձեռք չըտւեց մօտ բերած ճաշին, ծխեց չիբուխը և գուրս գնաց սենեակից: Հարևանուհիներից մէկը եկաւ հիւանդին այցելելու և բոլոր պառաւ կանանց սովորութեան համեմատ՝ սկսեց խորհուրդ տալ դիմելու աղօթողին: Սկզբում ես չէի ընդհատում նրա խօսակցութիւնը, իսկ վերջը գրեցի մի տոմսակ և խնդրեցի կնոջը տալ այդ նամակը բժիշկ Ռեզլէրին: Ես այն ժամանակ միայն գործունէութիւնը նոր սկսող բժիշկ էի և՛ պարզ ասած, Կազեայի հիւանդութեան մի քանի նշանները վախեցնում էին ինձ և անհանգստացնում էին, մանաւանդ որ չէի կարող ոչ մի կերպ նրանց ինձ բացատրել: Բժիշկ Ռեզլէրի այցելութեան սպասում էի իբրև փրկութեան: Երևակայեցէք իմ վիշտը,

երբ պառաւը վերադարձաւ և յայտնեց որ բժիշկը գնացել է գիւղ, իսկ իմ նամակը ինքը յանձնել է ծառային:

Ուրեմն երեսան մնում էր լիովին իմ պատասխանատուութեան վրայ: Ես չէի հեռանում խեղճ երեսայից, նրան փրկելու համար անում էի ամեն բան, ինչ որ կարող էի, բայց տարաբախտաբար հիւանդութիւնն այս անգամ գիտութիւնից ուժեղ էր... Յուսոյ ճառագայթը կարծես երևում էր, բայց յանկարծ նոր, սաստիկ և բոլորովին անսպասելի բարդութիւն ստիպում էր ինձ միայն տարակուսել:

Երանի՜ թէ հանգստացնող և փաղաքշական բառերը կարողանային թափանցել աղջկայ խեղճ, բայց այժմ խելակորոյս գլուխը, երանի՜ թէ կարելի լինէր մի որ և է բանով հեռացնել այն հրէշը, որ Կազեան շարունակ տեսնում էր իր առջև... Դեռ մանկութիւնից փաշտայած գործունէութեանս հէնց սկզբում վիճակած էր ինձ ընդհարւել բժիշկի համար սարսափելի իրողութեան հետ—միջի մէջ թափառել այն ժամանակ, երբ ամեն բան կարծես կը տայիր լոյսի շողի համար: Այժմ, երբ հանգիստ գրում եմ այս յիշողութիւնները մօտաւոր անցեալից, մի քանի մանրամասնութիւնները դառնում են ինձ համար պարզ, բայց այն ժամանակ նոքա ինձ համար մի մի հանելուկ էին,

որոնց լուծել ցանկանալով՝ կորցնում էի գլուխս։
Ես ոչ մի ջանք չէի խնայում, բայց վերջ ի վեր-
ջոյ պէտք է տեսնէի երեսպային մեռած։ Նա այն-
պէս էլ սառաւ իմ գրկի մէջ։ Վերջին կաթւածը
սպանեց աղջկան։ Մարմնի ջղաձգութիւններին և
նեարդային ցնցումներին վերջ դրեց մահը... Մի-
այն լայն չռած աչքերը այնպէս էլ մնացին զար-
հուրանքի արտայայտութիւնով։ Փակեցի նրա ա-
չիկները, ակամայ մտածելով այդ ժամանակ որ
դորանով յաւիտեան ազատում եմ աղջկան հրէշի
տեսքից, որ հալեց նրան։

Մայրը և հարեանուհիներից մէկը բարձր լա-
լիս էին, իսկ ես ցաւը սրտումս նայում էի ման-
կան անշարժ դէմքին և թշուառ փոքրիկ շրթներին,
որոնց ընդմիջտ հրաժեշտ էր տւել ծիծաղը։

Այդ ըոպէին ներս մտաւ բժիշկ Ռեդլէրը հան-
գիստ և լուրջ երեսով։

— Ես չէի կարող գալ աւելի առաջ... սկսեց նա։

— Ամեն բան վերջացած է— ընդհատեցի ես
նրան, — երեսան վախճանւած է...

— Եւ ի՞նչ էր այդ։ — Դուք գրել էիք որ՝ վախե-
նալով...

— Այո, երեսպայի նեարդները սաստիկ լարւած
էին... ոստիկաններին տեսնելով պատահեց առաջին
կաթւած...

— Ի՞նչպէս թէ ոստիկաններին...

— Ամսի վերջին օրը եկել էին լիշեցնելու ար-
տասահման անցնելու ժամանակամիջոցը...

— Բայց այդ անկարելի է, — այդ անկարելի է...
Այդ օրինակ բան խելքից հեռու է։ Հասարակ թիւ-
րիմացութիւն։ Իսկ դուք դրանից մի ահագին պատ-
մութիւն էք շինում...

Ես ոչինչ չը պատասխանեցի։ Նայելով մեռած
կաղեպին, — «խեղճ երեսպայ», մտածեցի ես, «երանի
թէ մահը էլ լինէր լոկ թիւրիմացութիւն»։

Դժբախտաբար, այդ իրողութիւն էր, իրողու-
թիւն շօշափելի, անհրաժեշտ, հանդերձ իր ամբողջ
ոչնչացնող սարսափով։

Միւս օրը տեսայ կաղեպին բարդի սպիտակ
դագաղիկի մէջ. խուփը դրած էր այդտեղ և եթ,
պատի մօտ։ Նրան հագցրին տօնի շորերը և կա-
նաչից հիւսած պսակը զարդարում էր նրա գլու-
խը։ Խորթ մայրը արտասուկից աչքերով նայում էր՝
առանց աչքերը հեռացնելու, գունատ դէմքին,
կարծես կամենում էր յաւիտեան տպաւորել իր լի-
շողութեան մէջ թանգազին գծերը։ Տեսնելով ինձ՝
խեղճ կինը սկսեց հեկեկալ։

— Տէր Աստուած։ Ի՞նչ պէտք է անեմ առանց
իմ անուշ որբիկի, — հեկեկաց նա։ — Այնպէս բարի
էր, այնպէս փափկասիրտ — ամենքը նրան սիրում
էին... Ո՛ւմ էր նա խանգարում։ Զնջեցին նրան
աշխարհիս երեսից։ Վայ իմ անբախտ գլխին...

Ես ծուռնի իջայ և սրտումս կարճ աղօթք ասացի մեզ ամենքիս թանգագին աղջկայ Հոգու Հանգիստ արքայութեան համար: Միայն վեր բարձրանալիս նկատեցի որ բանւորն էլ տանն է: Կանգնած էր նա անկիւնում պատի և վառարանի մէջտեղ, ուր սովորաբար թագ էին կենում երեխաները, երբ նա սենեակն էր մտնում: Դէմքը շուռ էր տւել պատին և արմունկով կրթնել էր վառարանին: Նրա ամբողջ էութիւնը արտայայտում էր այնչափ լուռ յուսահատութիւն, որ նրա վիշտը աւելի ինձ յուզեց քան թէ կնոջ բարձրաձայն հեկեկանքը:

Ծծկեր երեխան դեռ ևս տկար էր և այնիսկ վայրկեանին, երբ ես մօտեցայ օրօրոցին նայելու նրան, — սենեակի դուռը ճրճուաց և ոստիկանի բարձր մարմինը երևաց շեմքի վրայ: Տեսնելով դադաղը և նրա մօտ լաց եղող կնոջը, ոստիկանը կանգ առաւ շեմքի վրայ զարմացած:

— Աղջիկը... աղջիկը, — սկսեց նա՝ կակազելով:

Գերմաներէն լեզուն և ոստիկանի ձայնը լցրին բանւորի համբերութեան բաժակը: Մի ակնթարթում նրա կռացած մէջքը ուղղւեց, նա բարկացած բարձրացրեց գլուխը և նրա աչքերը փայլեցին: Զեռնեցով նա սեղմեց բազկաթուռի թիկունքը՝ ճնշելով նրա մէջ իր մատները՝ կարծես նա պէտք է մի բան ջարդէր ոչնչացնէր այդ ըոպէին:

— Գնա, աստ կոմմիսարին, — արտասանեց նա

խուլ, բարկութիւնից խեղդւող ձայնով, — որ նրա ցանկութիւնը կատարեց... Այն, ինչ որ պահանջում էին պրոլսական օրէնքները, կատարեց... Արտաքսեցին... խլեցին տանս ուրախութիւնը, կտրեցին մանր երեխաների մօր աջ ձեռքը:

Բանւորի վերջին խօսքերի մէջ լսում էր այնքան կսկիծ, որ թւում էր թէ ահա նա կը հեկեկայ:

— Իսկ հիմա... դուրս այստեղից, — աղաղակեց նա այնպիսի ահռելի ձայնով որ ես դողացի. — Ուզում էք տեսնել մեր արտասուքները, բայց ինձ մօտ մահն է հիւր եկել, իսկ նրա առջև պրոլսական գլուխն էլ պէտք է խոնարհւի: Դուրս, թէ չէ՝ քեզ վրայ կը կոտորեմ այս բազկաթուռը:

Ոստիկանը դուրս գնաց: Միայն այն ժամանակ, երբ նրա քայլերը լսեցին սանդուղքի վրայ, բանւորը բռնեց իր գլուխը և հեկեկաց սարսափելի յուսահատութեամբ:

Իսկ Կազեան: — Նա պառկած էր լուռ և մունջ... Ոչ ոստիկանի երևալը, ոչ խորթ հօր աղաղակն ու հեկեկանքը — ոչինչ էլ անհանգստացնում նրան: Նա մեր ամենքիցս հեռու էր:



4829

$$\begin{array}{r} 1 \\ 3 \overline{) 5.6} \\ \underline{3} \\ 26 \\ \underline{24} \\ 2 \end{array}$$

$$\begin{array}{r} 1 \\ 5 \overline{) 0.5} \\ \underline{5} \\ 0 \end{array}$$

$$\begin{array}{r} 1 \\ 4 \overline{) 10.4} \\ \underline{4} \\ 64 \\ \underline{64} \\ 0 \end{array}$$

$$1:0.4 = 0.8:5.6$$



